

## Մուշեղ Աբգարյանի այցը Սասունիկ համայնք

Հոկտեմբերի 15-ին փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանը այցելեց Սասունիկ համայնք: Նպատակը տեղում սեփական եկամուտների հավաքագրման ուսումնասիրությունն էր: Ծանոթանալով գործընթացին, փոխմարզպետը համայնքի ղեկավարի հետ քննարկեց այն առավել արդյունավետ կազմակերպելու հնարավորությունները:

Այցի ընթացքում քննարկվեցին նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից Սասունիկում իրականացվող շրագրերի ընթացքը: Նշվեցին համայնքում առկա մի շարք հարցեր, որորնք կներառվեն առաջիկա ծրագրերում: